

Տիկնայք և պարոնայք.

Ձեզ է ներկայացվում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արհեստակցական կազմակերպության՝ արհկոմի 2012թ. հունիսի 6-ից մինչև օրս՝ 06.07.2017թ. կատարած աշխատանքների հաշվետվությունը:

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արհեստակցական կազմակերպությունը գրանցված է Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրում՝ որպես իրավաբանական անձ: Այն գործում է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, արհմիության մասին օրենքի, ՀՊՄՀ-ի կանոնադրության, և այլ իրավական ակտերի հիման վրա:

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արհեստակցական կազմակերպությունը ղեկավարվելով համերաշխության, ժողովրդավարության և օրինականության սկզբունքներով, իր գործունեությունը նպատակաուղղել է արհմիության անդամների աշխատանքային և սոցիալական շահերի պաշտպանությանը :

Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել է արհկոմիտեի 45 նիստ, որտեղ քննարկվել են համալսարանի առօրեային՝ միջոցառումների կազմակերպմանը, նյութական օժանդակությանը, աշխատողների իրավունքներին, աշխատանքային կարգապահությանը վերաբերվող բազմաբնույթ հարցեր:

Բուհի արհեստակցական կազմակերպությունը համագործակցել է նաև մշակույթային այլ օջախների հետ, ինչը նպաստել է աշխատողների և ուսանողների ազատ ժամանցի կազմակերպմանը, ինչպես նաև նրանց գեղագիտական, ճանաչողական, հայրենասիրական և մարդասիրական ոգով դաստիարակությանը:

Արհեստակցական կազմակերպության միջոցների հաշվին՝ ուղեգրի արժեքի 30-ից 50 տոկոս գեղջով Աղավնաձորի ուսումնամարզական բազայում կազմակերպվել է համալսարանի աշխատողների և նրանաց ընտանիքի անդամների հանգիստը:

Հաշվետու ժամանակաշրջանում արհկոմիտեի կողմից պարբերաբար քննարկվել է համալսարանի աշխատակազմի սոցիալական վիճակը, անհրաժեշտության դեպքում նրանց ցուցաբերվել է նյութական աջակցություն:

Արհեստակցական կազմակերպությունը արհկոմիտեի ֆինանսական աջակցությամբ իրականացրել է մի շարք միջոցառումներ, այդ թվում.

1. Ամանորյա միջոցառումների կազմակերպում աշխատակիցների և նրանց երեխաների համար:

2. Բանակի օրվան նվիրված միջոցառումներ:
3. Կանանց միամսյակին նվիրված տոնական միջոցառումներ:
3. Աշխատողների օրվան նվիրված միջոցառումներ :
4. « Երեխաների պաշտպանության օրվան » նվիրված միջոցառումներ:
5. Համալսարանի աշխատակիցների երեխաների համար Գիտելիքի օրվան նվիրված միջոցառումներ:
6. Գրադարանավարի օրվան նվիրված միջոցառումներ:
7. Արհկոմիտեի կողմից ֆինանսասական աջակցություն է ցուցաբերվել տարբեր խորագրերով գիտաժողովների կազմակերպմանը, որոնք նպաստել են դասախոսների գիտական կյանքի խթանմանը:

Որպես բուհի արհեստակցական կազմակերպության նախագահ մասնակցել եմ մի շարք սեմինարին, որտեղ քննարկվել են տարբեր թեմաներ, որոնք վերաբերում էին կրթության միջազգային դերին ու աշխատանքին, արհմիութենական իրավունքներին և աշխատանքի միջազգային չափորոշիչներին, միությունների կարողությունների բարելավմանը և այլն:

Հարգելի՛ հյուրեր և պատվիրակներ, ավարտելով խոսքս թույլ տվեք շնորհակալություն հայտնել ԲՈՒՀ-ի ռեկտորին աջակցման և համագործակցման համար, պրոռեկտորներին, արհկոմիտեի նախկին կազմին, որոնց հետ աշխատել եմ 2012 թվ.-ից մինչև օրս: Շնորհակալություն նաև Ձեզ ` պարոն Վաղարշակյան, շնորհակալություն նաև ԲՈՒՀ-ի այն աշխատակիցներին, որոնք նպաստել, իրենց մասնակցությունն ու աջակցությունն են բերել մեր աշխատանքի կազմակերպմանը: